


ԱՍԹՄԱ

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԻՆՉ Ե ԱՍԹՄԱՆ

Ասթման շնչուղիները ախտահարող հիվանդությունն է: Այն համարվում է երեխաների շրջանում ամենատարածված քրոնիկ հիվանդություններից մեկը:



ԻՆՉ ԱՆՏԱՆԻՇՆԵՐՈՎ Ե ԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ

Ասթմայի հետևանքով առաջանում են դժվարաշնչություն, խզզոցներ, կրծքավանդակում սեղմման զգացում կամ ցավ և առավելապես լուսաբացին արտահայտվող հազ: Այս ախտանիշները պարբերաբար կրկնվում են երեխայի մոտ: Սա տեղի է ունենում, քանի որ շնչուղիների պատը այտուցվում է բորբոքման հետևանքով, լուսանցքը նեղանում է և լցվում է լորձով:



ԻՆՉՈՒ՝ Ե ԱՌԱՋԱՆՈՒՄ ԱՍԹՄԱ

Ասթման առաջանում է գեների և շրջակա միջավայրի գործոնների ազդեցության հետևանքով: Հաճախ ասթմայով երեխայի ծնողները կամ մոտ բարեկամները նույնպես ունենում են ասթմա:



Քաշի ավելցուկ ունեցող երեխաների մոտ ասթմա առաջանալու հավանականությունը մեծանում է:

ԻՆՉՊԵՍ Ե ԱՆՏՈՐՈՇՎՈՒՄ

- Բժիշկը տալիս է հարցեր գանգատների, հիվանդության պատմության վերաբերյալ,

- Բժիշկը գնում է երեխային,

- Բժիշկը շնչառության ֆունկցիայի գնահատում է կատարում (սպիրոմետրիա):

Սպիրոմետրը գործիք է, որի միջոցով գնահատում են երեխայի շնչուղիների աշխատանքը: Հետազոտության ընթացքում երեխան պետք է փչի մուշտուկի միջոցով, բժիշկը կարող է խնդրել երեխային հանգիստ շնչել, խորը շունչ քաշել, ուժեղ փչել: Կարևոր է, որ երեխան ճիշտ կատարի բժշկի հրահանգները. դա է պատճառը, որ այս հետազոտությունը ովորաբար անցկացվում է 5 տարեկանից մեծ երեխաների մոտ:



ՍՐԱՑՈՒՄ ԱՌԱՋԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ՝ ՏՐԻԳԵՐՆԵՐ

Անհրաժեշտ է բացահայտել և խուսափել տրիգերներից: Տրիգերը այն նյութն է, որը կարող է ազդել շնչուղիների վրա և սրացման պատճառ դառնալ: Տարածված տրիգերներ են ծխախոտի ծուխը, օծանելիքը, սուր հոտերը, ծաղկեփոշին, բորբոսը, եղանակային փոփոխությունները, վիրուսային վարակները, ֆիզիկական ակտիվությունը:



ՃԱՆԱԶԵԼ ՍՐԱՑՄԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր ծնող պետք է ճանաչի ասթմայի սրացման նշանները՝ ժամանակին ճիշտ օգնություն ցույց տալու նպատակով: Ասթմայի սրացումը կարող է արտահայտվել դժվարաշնչությամբ, հազով, կրծքավանդակում սեղմման զգացողությամբ, սուլող խզզոցով շնչելու ժամանակ, սրտխփոցով:



ԲՈՒԺՈՒՄ

Բուժման դեղերը հիմնականում տրվում են ինհալացիայի միջոցով:

Տարբերում են 2 խումբ դեղեր՝ արագ ազդող, որոնք օգտագործվում են ըստ անհրաժեշտության, և երկարատև կիրառվող հիմնական դեղեր, որոնք կանխում են ախտանիշների առաջացումը, նվազեցնում են շնչուղիների բորբոքվածությունը: Բուժման ընթացքում երկրորդ խումբ դեղերը պետք է օգտագործել ամեն օր, նույնիսկ երբ երեխան իրեն լավ է զգում:



Ասթմա ունեցող երեխաների մեծ մասի մոտ ախտանիշները կառավարելի են, նույնիսկ այն աստիճանի, որ սրացումները շատ հազվադեպ են լինում:

Ճիշտ բուժում ստանալու և հսկողության դեպքում երեխայի մոտ ախտանիշներ կարող են չլինել և երեխան որևէ սահմանափակում չի ունենում:

Զի կարելի ինքնուրույն դադարեցնել նշանակված դեղորայքը:

Կարևոր է տեխնիկապես ճիշտ օգտագործել շնչելու համար նախատեսված դեղերը:

ԱՍԹՄԱ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՅԻ ՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Ասթմա ունեցող երեխայի մոտ պետք է առկա լինի ասթմայի վարման պլան, որտեղ նշվում է, թե



- ի՞նչ դեղի կարիք ունի երեխան և ե՞րբ պետք է օգտագործել,

- որո՞նք են երեխայի հիվանդության տրիգերները և ինչպե՞ս խուսափել դրանցից,

- ինչպե՞ս վարվել սրացումների ժամանակ:

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ

- Խորհուրդ է տրվում յուրաքանչյուր տարի պատվաստել երեխային սեզոնային գրիպի դեմ:

ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԵԼ, ԵԹԵ ԵՐԵՒԱՅԻ ՄՈՏ ԱՌԿԱ Է՝

- արտահայտված դժվարաշնչություն,
- արագ ազդող դեղերի անարդյունավետություն: